ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

ՆԱԽԱԳԻԾ

Կ-860-01.10.2015-ՏՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՀԱՐԿԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի ապրիլի 14-ի ՀՕ-107 օրենքի 13.7-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին կետում «գործունեության տեսակներ իրականացնող անձինք» բառերից հետո լրացնել «(բացառությամբ «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հավելվածով հաստատված ցանկի 13-րդ կետով նախատեսված գործունեության տեսակն իրականացնող անհատ ձեռնարկատերերի)» բառերը:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2016 թվականի հունվարի 1-ից:

Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո «Արտոնագրային վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հավելվածով հաստատված ցանկի 13-րդ կետով նախատեսված գործունեության տեսակն իրականացնող անհատ ձեռնարկատերերը կարող են ընտանեկան ձեռնարկատիրության սուբյեկտ համարվել «Հարկերի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում՝ անկախ տվյալ տարվա որևէ ժամանակահատվածի համար արտոնագրային վճար վճարող համարվելու հանգամանքից: Նշյալ դեպքում հարկային հաշվառման և հարկային պարտավորությունների հաշվարկման հետ կապված հարցերը կարգավորվում են «Հարկերի մասին» ՀՀ օրենքի II.2-րդ գլխով սահմանված կարգով և տվյալ տարվա որևէ ժամանակահատվածի համար վճարված արտոնագրային վճարի գումարը հետ վերադարձման ենթակա չէ:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

«Հարկերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին»
ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ առաջինից երկրորդ ընթեցմամբ քննարկման ժամանակահատվածում ներկայացված առաջարկությունների, դրանց ընդունման կամ չընդունման վերաբերյալ

Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Կատարված փոփոխությունները
ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր Հովհաննես Մարգարյան	Առաջարկվում է նախագծի 1-ին հոդվածում ընդգրկել նաև «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի թիվ 1 հավելվածի 11-րդ կետով նախատեսված՝ «Մասնավոր տնային տնտեսություններում ծառայությունների մատուցում (առանց տարբերակման) սեփական սպառման համար» գործունեության տեսակը:	Նախագծի շրջանակներում ներկայացված առաջարկության ընդունումը խնդրահարույց է, քանի որ Հայաստանի Հանրապետությունում գործող՝ գործունեության տեսակների դասակարգչի համաձայն, առաջարկվող գործունեության տեսակն իր մեջ ներառում է բիզնեսի կողմից տնային տնտեսություններին մատուցվող ծառայությունների լայն շրջանակ: Այդուհանդերձ, առաջարկությունը կարող է առաջիկայում քննարկման առարկա դառնալ «Արտոնագրային վճարների մասին» ՀՀ օրենքի 1-ին հավելվածով ներկայացված գործունեության այլ տեսակները նույնպես ընտանեկան ձեռնարկատիրության համակարգում ներառելու, ինչպես նաև գործունեության տեսակների դասակարգչի հնարավոր վերանայման աշխատանքների համատեքստում: